ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1. 1952 Общественные науки

Մ. Հասրաթյան

ԼՈՐ ԳՅՈՒՂԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

(1950 թ. Սիսիանի հնագիտական էքսպեդիցիայի աղյուսներից)

Լոր գյուղը գտնվում է Սիսիանի շրջկենտրոնից 17—20 կմ. հեռավորության վրա, շրջանի հարավ-արևելյան մասում, հին Լորաձոր, կամ Վերին-ձոր, այժմ Դարբասի ձոր կոչվող հովտում, Հաչենա գետակի ձախ ափին։

Այստեղ, մանկությունից հիշում էի մի վայր, որտեղից հին ամաններ և դանազան այլ իրեր էին թափվում, գետի հոսանքից քանդվող քերծից՝ «կոռապաշտի տներից»։

1950 թ. ամառը, հնագիտական հետախուզությունների նպատակով, գնացի այդ նույն վայրը, որը գտնվում է Լոր գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք Սիպտակ խաչեր, կամ Շլորուտ կոչվող հնագիտական վայրի գիմաց՝ դեպի արևելք, գետակի աջ ափին, և կոչվում է Կուզկաքար (երևի ոչ թե կուզիկ, այլ կոծիկ բառից)։ Այլևս փոքրիկ քերծի վրա գտնվող այդում չգտա այն հին նշանները, որ կային մոտ քառասուն տարի առաջ. գետակը քանդել էր պտղատու այգուց մոտ 8—10 մետր տարածություն, որի թեքության վրա այն ժամանակ մնում էին խոր ակուղի (օղախի) նման անցքեր՝ վերևից ևս քարով ծածկված. դրանք եղել էին մի կողմից բաց արած, քարարկղային տիպի դամբարաններ։

Օգոստոսի 24-ին, գյուղի մի քանի դասատուների հետ, Կուզկաքարում, նույն քերծի վերին շուրթից, մկան անցքի ուղղությամբ կես մետր փորեցինք և հանդիպեցինք բարակ սալաքարի, որը գերեզմանի ծածկն եր։ Ծածկի առաջին, թեթև սալ քարը հանելուց հետո բացվեց փոքրիկ գերեզմանի ներքին ամբողջ գծագրությունը, որովհետև ջրաբեր հողով լցվել էր միայն խորության կեսը։ 8 հատ, 7—8 սմ հաստությամբ բնական սալքարերով պատրաստված էր քարարկղյա փոքրիկ գերեզմանը և 3 հատ սալաքարով ամուր ծածկված։ Բացված անցքից երևում էր երկու երրորդով հողի մեջ որոշ թեքությամբ պառկած, փոքրիկ ամանի բերանը, որը վկայում էր, թե կմախքի գլուխը պետք է լինի հակառակ կողմից-դեպի հյուսիս, քերծի ուղղությամբ։ Առաջին հինգ սմ. հողը փափուկ էր և չոր, որից հետո սկսում էր խոնավ և ամուր կավի շերտը։ Այդ պահանջում էր զգույշ և մանրակրկիտ պեղում, որը տևեց հինգ ժամ (բարակ անձրևի տակ)։

Դամբարանի երկարությունը, ներսից 102 սմ. էր, լայնությունը՝ 53 սմ։ Ձգված հարավից-հյուսիս։ Դանգը, իրոք, հյուսիսային կողմից էր, 12 սմ դեպի ներս։ Փոշիացած կմախքը ձգված էր 73 սմ. երկարությամբ, ոտքերի թաթերի վրա թեքված էր սափորը, որը հարավային պատից դեպի ներս էր դրված նույնպես 12 սմ։ Պարզ էր, որ գործ ունեինք մի քանի տարեկան երեխայի գերեզմանի հետ։ Անհամեմատ լավ էր պահպանված գանգը, հատկապես ստորին և վերին ծնոտները՝ ատամներով։ Ատամների տեսքը, սղոցաձևությունը և նոր սկսվող փոխման պրոցեսը ցույց է տալիս, որ շուրջ 7 տարեկան երեխայի գանգ է։

Չէր կարելի ենթադրել, թե այս փոքրիկ, անպաճույճ գերեզմանը պետք է տար անջնջելի նյութեր Հայաստանի հնագիտության պատմության մեջ...

Երեխայի տարիքը ցույց է տալիս, որ նա պետք է ունեցած լիներ 115—120 սմ. հասակ, բայց կմախքը բռնում էր 73 սմ. տարածություն, որովհետև ոտքերը ծալված էին, ինչպես այդ սովորական է հնագույն և հեթանոս թաղումների համար։ Սակայն ատամների արանքում գտնվեց կանաչ պատինայով (ժանգով) մի դրամ, որը Պետ. պատմական թանգարանի ռեստավրատոր Վահրիճ Դաղազյանի մաքրելուց հետո, Ն. Մ. Շահնազարյանի օգնությամբ պարզեցինք, որ պատկանում է պարսից արքա Շապուհ 3-րդին (383 389 թթ.)։ Ուստի ոչ մի կասկածի ենթակա չէ, որ հայկական այս հեթանոս ձևով թաղման ժամանակն ընկնում է հայոց Վռամշապուհ Արշակունի թագավորի գահակալության տարիներին (389 91—414 թթ.) ավելի ճիշտ, պետք է համարել 390—410 ժամանա-

կամիջոցի թաղում։ Դուցե առարկեն, թե հնարավոր է և ավելի ուշ ժամանակների թաղում լինի, որովհետև նախկին թաղավորների գրամները երկար ժամանակ պահպանվում էին բնակչության մեջ, բայց այդ կհակառեր հայ իրականության պատմությանը և այդ նույն տարիներում Սյունիքում (որի կենտրոնը հենց Սիսիանն էր), Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը։ Անշուշտ հեթանոսության պայքարն ու մնացորդները իսպառ չեն վերացել 5-րդ դարում, այլ շարունակվել են և հետագայում, բայց մենք պետք է հաշվի առնենք նախ այն փաստը, որ հին թագավորները, հատկապես Սասանյան արքաները, իրենց նախորդների դրամները հանում էին շրջանառությունից, երբ իրենք նոր դրամ էին կտրում, երկրորդ, պետք է նկատի ունենանք 5-րդ դարի առաջին կեսի հեղինակ Կորյունի վկայությունը։

Կորյունը պատմում է, որ հայերեն նշանագրերն ընդունվելուց հետո Մաշտոցը համաձայնություն է ստանում «Ի սփիւռս հեթանոսաց զբանն կենայ սերմանիցենջ։ Ըստ երևույթին ցրված շատ հեթանոսներ կային հատկապես Գողթնում և Սյունիքում, այդ պատճառով էլ Մեսրոպը, Տիրայր Խորձենացու և Մուշեղ Տարոնացու հետ ուղևորվում է առաջին հերթին իրեն լավ ծանոթ, Գողթան գավառը։ Այստեղից նա գնում է հարևան Սյունիք, Վաղինակ իշխանի օգնությամբ շրջում բովանդակ նահանգում և «առաւել զդաղանամիտ, գվայրենագոյն, զճիւաղարարոյ կողմանցն» պատանիներ հավաքում, դաստիարակում, կրթում և նույնիսկ այդ «վայրենիներից» մեկին, որի անունը Անանիա էր, կարգում Սյունիքի եպիսկոպոս-տեսուչ։ Պարզ է, որ Կորյունը դաղանամիտ, վայրենի և ճիվաղ անվանում է երկրի անտառապատ լեռնահովիտների այն բնակիչներին, որոնք դեռևս մնացել էին հեթանոս, և նույնիսկ կարելի է ենթադրել, թե հիշյալ Անանիան մի գաղանամիտ ու վայրենի պատանի չէ եղել, որ կարողանար մեկ-երկու տարում դրագետ տեսուչ-եպիսկոպոս կարգվել Հայաստանի ամենախոշոր նահանգներից մեկում, այլ փորձված դրագետ քուրմ եղած պետք է լիներ։

Ինչպես ասացինք, Լորը, Սյունիքի իշխանանիստ կենտրոնից, պատմական Սյունի ավանից (արդի Սիսիանից) 17—20 կմ. հեռավորության վրա է, իսկ այն ժամանակվա երկու խոշոր սրբավայրերից, Վաղադի—Որոտանից և Տաթևից շատ ավելի մոտիկ, հետևաբար, 405—410 թթ. այդ գյուղը չէր կարող Վաղինակ իշխանի, Մեսրոպի և նորադարձ Անանիայի աչքից վրիպել, որպեսզի շատ ավելի ուշ ժամանակներում անպատիժ կերպով, երեխային հեթանոս ծեսով թաղեին։

Լոր գյուղի այս փոքրիկ դամբարանը մի հետաքրքրական երևույթ է հայ ժողովրդի պատմության այդ նշանակալից էջի համար։ Պետք է ասել, որ հռոմեական սովորույթ համարվող այս ծեսը—դրամը բերանին, կամ ձեռքի ափին թաղելը, հաղվադյուտ երևույթ չէ Անդրկովկասում։ Մի շարք փաստերից երևում է, որ այդ ծեսը հելլենիզմի էպոխայում տարածված երևույթներից մեկն է, և վկայում է, թե որքան ուժեղ է եղել հելլենիզմի տարածումը նաև Անդրկովկասում, որ անդամ խուլ գյուղերում նկատվում է այդ փաստը։ Դեռևս 1903 թ. Ռոդենդորֆը Գանջա—չայ գետի շրջանում, Կիրովաբադի և Խանլարի արանքում կատարած պեղումների ժամանակ մի դամբարանում, կմախքի ծնոտի տակ գտնում է «հռոմեական պղնձե» դրամ, որի մասին այլ վկայություն չկա։ 1937 թ. այս նույն դամբանադաշտում պեղումներ է կատարում և հնագետ Գումմելը։ Նա, հում աղյուսից պատրաստած և արևելքից -արևմուտք ձգված երկու իրար կից դամբարանում նույնպես կմախքի ծնոտի տակ գտնում է երկու դրամ, որոնք, ըստ երևույթին, վաղուց ընկած են եղել բերանից, որովհետև երկու դիակների (կին և տղամարդ) ձեռքերը ծալված են եղել փորի վրա։ Սրանց ոտքերի թաթի մոտ էլ եղել են մեկական ամաններ։ Կնոջ դերեզմանը ավելի հարուստ է եղել զարդերով ու կավե ամաններով։ Դրամների մասին Գումմելը գրում է, թե «դրամները պղնձի մեծ խառնուրդ ունեցող ցածրակարգ արծաթից են։ Հնարավոր է, որ Ռոդենդորֆի գտած դրամը ևս արծաթից է եղել, բայց վատ մաքրած լինելու պատճառով համարել է պղնձյա»։[1]

Դրամներից մեկը պատկանում է Պարթև Արշակունիներից Հրահատ 3-րդին (70-68-58(57)), իսկ երկրորդը առաջինի հաջորդ կամ երկրորդ հաջորդ Օրոդ 1-ին (57—37) թագավորին։ Այս դրամների լեգենդները հունարեն են։ 1948 թ. Կարմիր-բլուրի միջնաբերդից դեպի արևմուտք ընկած Թեյշեբաինի քաղաքի ավերակների պեղման ժամանակ մի ավերված

[1] Я. И. Гуммель, Археологические очерки, стр. 159, изд. Азфан. Баку, 1940.

տան մուտքի երկու պատերի արանքում, շեմքին չհասած, գտնվեց մի փոքրիկ երեխայի դամբարան, որի բերանում գտնվեց Ալ. Մակեդոնացու մեկ արծաթ դրամը։ Սա, հավանարար, մեր թվ. առաջ 4-րդ դարի վերջի, կամ, ավելի ճիշտ, 3-րդ դարի թաղում է ինչպես ենթադրում է Բ. Բ. Պիոտրովսկին։[1]

1950 թ. հոկտեմբեր ամսին Գառնիի պեղումների ընթացքում, գյուղի միջով անցնող խճուղու աջ եզրին գտնվող դամբարաններից մեկում, դիակի ձախ ափի մեջ և բերանում գտնվեց երկու դրամ, երկուսն էլ հռոմեական կայսր Օկտավիանոսի, որից կարելի է ենթադրել, թե այդ թաղումը պետք է եղած լինի շուրջ 1950 տարի առաջ։

Պետք է ենթադրել, որ գոյություն ունեցող դանազան տեսակետների մեջ ամենից հավանականը այն է, որ այդ ժամանակներում ես տարածված հանդերձյալ կյանքի հասկացողությամբ, դրամ էին դնում մեռելի բերանում կամ ձեռքում, ավելի շատ հանդերձյալ կյանքի «մուտքի վարձ» տալու համար, քան այլ նպատակով։ Ուստի, ավելի շուտ, այդ պետք է գտնել խոսելու, բացատրելու մեջ ոչ վարժ մանուկների և պատանիների (խուլ ու համրերի) դերեզմաններում, քան՝ մեծերի։ Այս տեսակետից ելնելով, անհավանական չէ նույնպես, որ հաղիվ թե շրջանառություններից դուրս եկած դրամով թաղեին իրենց հարազատին, որը ուժ չէր ունենա նաև ենթադրյալ-հանդերձյալ կյանքում։

Հիշյալ փոքրիկ հուշարձանի առավելությունները չեն սպառվում արդեն արված դիտողություններով։ Որպես Հայաստանի վաղ պատմական շրջանի առաջին հավաստի դերեզմանային հնագիտական օրեկտ, Լոր գյուղի այդիներում պեղված այս փոքրիկ դամբարանն ունի նաև այն առավելությունը, որ իր մեջ պարունակած աղբատիկ իրերը— դարդերը հնագիտական համեմատության և թվագրության տեսակետից ևս ունեն մեծ նշանակություն, որոնք բերված են ստորև (բացի կավե անոթից), ճարտ. Ի. Արզումանյանի կատարմամբ։

1. Գերեզմանում գտնվող միակ կավե անոթը պատրաստված էր վատորակ կարմրագույն կավից, մեծ քանակությամբ սպիտակ դույնի ավազով խառը և շատ վատ թրծված, ուստի դարերի խոնավությանը չէր դիմացել և փշրվում էր ձեռքի մեջ։ Թեև պատրաստված էր ձեռքով, բայց այնքան վարժ, որ անգամ կարելի էր շփոթել դուրգով քաշած ամանի հետ։ Ամանի բարձրությունը 22 սմ. էր, բերանի տրամագիծը՝ 10, նեղացող բուկը՝ 7, միջին, կամ փորի տրամագիծը՝ 14,5 սմ. այս անոթի մեջ կար միայն մկան բուն, լիքը՝ բալի ու կեռասի կորիզով ու բրդով, թե դրանից առաջ ոսկրի կամ այլ մնացորդ եղել է, դժվար է գուշակել, բայց հավանարար սկզբից էլ դատարկ է եղել, կամ՝ միայն հեղուկով լի։

2. Կմախքի աջ անրակի վրա՝ ուսին, ընկած էր ձեռքով շատ անվարժ պատրաստած կավե փոքրիկ ամուլետ, մեջտեղից փոքրիկ անցքով, որը շատ նման է թուղի սխմած չիրի։ 3,5 սմ. տրամագծով, մոտ մեկ սմ հաստությամբ։ Ուրիշ դեպքում, երևի, այս իրը ես համարվեր իլիկի կամ թեշիկի գլուխ, բայց իր գտնված տեղը վկայում է, որ անկասկած ծառայել է որպես ամուլետ, հավանարար, որպես արևի դիսկի սիմվոլ։ Այս իրի մոտ ընկած էր նաև սարդիոնե մի ուլունք, որի մեջ անցկացրած թելով էլ, երևի, կարել ամրացրել են հագուստին։

3. Ականջների մոտ գտնվեցին բրոնզե (կամ պղնձախառն արծաթե) բավականին ծանր գինդեր, որոնք պատած են կանաչ ժանգով և դեռ մաքրման չեն տրված, որովհետև մեկի վրա կնքված է մանր ցանցի հետքեր, որ ենթադրում եմ, թե հագուստի թելերն են ժանգի հետ քարացել, մնացել։ Գինդերը դույգ են, մեկը քիչ փոքր մյուսից (բալի չափ և կեռասի կորիզի չափ), իրենց առանձին կանթերով, որոնց սուր ծայրերը նստած են իրար վրա։ Այս օղերը թեև բաց են, բայց հավանարար կապվել են թելով, որովհետև երկու օղ չէին հագցնի մեկ ականջի բլթակին։ Զախ ականջի մեկ գինդը, խոշորը, ընկած է եղել մինչև թաղումը, որովհետև կանթը, ժանգի շնորհիվ մնում է կպած մյուս կանթին, իսկ ծայրերը բթացած են ժանգից։ Ինչպես նկատելի է, ականջի այս գինդերը, իրենց ձևով հազվագյուտ են մինչև այժմ գտնված ականջի գարդերի-օղերի մեջ և որոշ չափով նմանվում են ավելի ուշ ժամանակների գինդերին։

4. Շատուհ 3-րդի դրամը պղնձախառն արծաթ է, այդ պատճառով էլ պատել էր թանձր ժանգով։ Դրամի լեգենդը (գրությունը), որ եղել է պահլավերեն, ժանգից մաշվեր-չքացել է, բայց մեկ կողմից պարզ երևում է սասանյան թագավորի սովորական կերպարը, թագը գլխին, պրոֆիլը դեպի աջ, ծոծրակին նստած մազերի փնջով, մորուքով, մյուս

[1] Б. Б. Пиотровский, Результаты раскопок 1949 г., стр. 19.

կողմից աշտանակաձև ատրուշանն է, երկու մարդ՝ քուրմեր, ավելի ճիշտ դինված պահակներ, ամբողջ հասակով, կանգնած շուրջը։ սակայն ատրուշանի վրա ոչ թե կրակի լեզուներ են, այլ մարդու կիսանդրի։

5. Կրծքի վրա գտնվեց մեկ սանտիմետր տրամագծով և մեկ սանտիմետր բարձրությամբ սնամեջ բրոնզե օղակ, որի ինչ լինելը դժվար է որոշել, միայն պարզ է, որ նրա միջով հաստ թել է անցել և ինչ որ բան միացվել կամ կախվել, գուցե և վզնոցի շարանից է ցլորվել կրծքի վրա։ Դրա մոտ էլ հենց գտնվեցին երկաթե, իսպառ քայքայված, իրի բեկորներ, որը շատ հավանական է, եղել է կամ զարդ, կախված վերը նշված օղակից, կամ քորոց է եղել հագուստի երկու մասերն ամրացնելու համար։ Վերջինս ավելի հավանական է թվում, նախ կրծքի վրա գտնվելու, երկրորդ, երկու-երեք սմ. երկարությամբ երկաթի ձողերի առկայության պատճառով։



6. Այս փոքրիկ աղջկա վզին կար երկու շար վզնոց։ մեկը, միանման թխագույն տափակ ուլունքներից բաղկացած և ավելի մոտ վզի ողներին, որ ցույց է տալիս, թե հպված է եղել պարանոցին։ 23 տափակ ուլունքներից՝ բաղկացած այս վզնոցը շարվում է 26 սմ. թելի վրա, որը ճիշտ համապատասխանում է շուրջ 7 տարեկան երեխայի պարանոցի հաստությանը։ Վզնոցի մեջտեղում, ծնոտի տակ գտնվում էր մեղրի փոքրիկ կաթիլի նման, մուգ դեղնագույն ապակյա մեկ ուլունք։ Մյուս 23 ուլունքները ողորկ են և ցեխի մեջ փայլում էին սև սաթի նման։ Այժմ լվանալուց և օդի հետ շփվելուց հետո, որոշ չափով դորշ գույն են ստացել, բայց ջրի մեջ կրկին սևին են տալիս և ավելի ողորկ դառնում։ Թվում է, թե եղջյուրից կամ սև փայտից են, բայց թեթև են և պատրաստված են ինչ որ մասսայից։ Այս տափակ ուլունքներն ունեն 8—10 մմ. երկարություն, 7 մմ. լայնություն, 3 մմ. հաստություն, երկարության վրա՝ երկու հավասար անցքեր, այսինք շարվել են կրկնակի թելով, որպեսզի միայն մեկ երեսը երևա և չշրջվի։ Այս երևացող երեսը երկարությամբ ունի իքսաձև նշան և չորս կողմից փոքրիկ հատածներ։ Ուլունքի երեսի այս գծերը լցված են եղել սպիտակ ինչ որ մասսայով և գեղեցիկ տեսք են տվել վզնոցին։ այդ սպիտակ գույնը նկատելի էր դորշ կավի միջից ուլունքները հերթով հանելիս։



7. Մյուս վզնոցը բաղկացած է զանազան ձևի, գույնի և տարբեր նյութերից պատրաստված ուլունքներից, և շարվում է 32 սմ. թելի վրա։ Իրոք նրա սարդիոնե չորս մաշված ուլունքները և երկու բավական խոշոր ոսմրաձև դեղնակարմիր գույնի ագաթե կամ սարդոնիքսե ուլունքները գտնվեցին կրծքավանդակի վերին փոսի մեջ։ Սրանց մեջ կան սև պաստայից երկարավուն և նույն՝ մասսայից երկու օլորուն և հատվածներով ուլունքներ, երկու երկար փխրուն, ապակեխառն մասսայից ուլունքներ, մեկ հատ կապույտ, ութանիստ ապակյա երկար ուլունք՝ մեջտեղն ուռուցիկ, 20 հատ ճերմակ պաստայից, և ապակե կամ փայլարե փոշի խառնած երկու այլ մանր ուլունքներ, որոնք, բոլորը դեռևս կարիք ունեն առանձին ուսումնասիրության։ Կա և մի այլ փոքր ուլունք, որը անշուշտ այս շարանի երկու ծայրերից մեկն է դրազեցրել կարմիր կավե գույնի, մինիատյուր կացնի տեսքի։

1 Մեկը, գուցե, աչքից փախել է, համանման գույնի ցեխի մեջ, կամ չի եղել։

Շուրջ 1550 տարվա հնություն ունեցող այս թաղումը ևս, Սիսիանի կավահողի հատկության—մշտական խոնավության պատճառով չէր պահպանել կմախքի անվթարությունը, ինչպես և մեր պեղած մյուս դամբարաններում։ Ուշագրավ է նաև այն, որ ոտքերը կծկած վիճակում այս հնագույն ծեսով թաղման մեջ կային որոշ տարբերություններ, կմախքը, փոխանակ, ինչպես հաճախ լինում է, աջ ականջի վրա լինելու, երեսը դեպի երկինք էր դրված, փոքրիկ թեքությամբ դեպի արևմուտք, իսկ ձեռքերը, բնական վիճակով, ձգված կողերի ուղղությամբ։ Պարզ է, որ սովորականի պես կողքի վրա չի եղել պառկեցրած, այլ, աննշան թեքությամբ, մեջքի վրա, որը հատուկ է քրիստոնեական ծեսին, ինչպես նաև հանդիպում է որոշ դամբարաններում, հենց Հայաստանում, քրիստոնեության տարածումից շատ առաջ։ Հավանաբար ոտքերը ծալված են եղել ծնկներով դեպի վեր։



Գետակի աջ ափի բարձունքի թեքության վրա գտնվող գերեզմանատունը պարտադրում էր գտնել մոտակա բնակավայրի տեղը։ Սրա տեղը գտնելը դժվար չէր. գետակի ձախ ափի լանջի վրա, որ այժմ այգիներ են, և այդ լանջից վերև եղած հարթության վրա, մինչև լեռան ստորոտները, որ այժմ կոչվում է Շլորուտ[1], հազիվ նշմարելու չափ

[1] Այսպես է կոչվում, որովհետև մինչև այժմ մնացել են վայրենացած սալորենիների թփեր, որոնք, անշուշտ, հին բնակավայրի բակերում եղած սալորենիների մնացորդներն են, որ դարեր շարունակ կարող են արմատներ տալ և իրենց գոյությունը պաշտպանել քարակույտերի և մասրենու մացառների մեջ։

պահպանվել են հին բնակավայրի հետքերը, իսկ ավելի շատ մեկ երկու շարքով մեծաքար պարիսպները, մանավանդ միջնաբերդի պարիսպը, աշտարակների հետքերով։ Այս վայրն այժմ Լորի Սիպտակ խաչի արտերն են։ Այստեղ այնքան շատ և մեծ քարակույտեր կան, հատկապես հաստ պարսպի մնացորդի անմշակ քարերը, որ ամբողջ գյուղատեղը վարելյուրացնել հնարավոր չի եղել։ Այստեղ էլ հենց գտնվում է 13—14-րդ դարերի տոհմական մի փոքրիկ գերեզմանոց զեղեցիկ մատուռ-մահարձանով, որը դուցե պատկանում է Օրբելյան տան կրտսեր մի ճյուղին-Որոտշահ, Գրիգոր և Լորիկ եղբայրները կանգնեցրել են իրենց հոր՝ Հայրապետի և մոր հիշատակին։ Հավանաբար, 5—6-րդ դարերում այս գյուղը փոխադրված է եղել այժմ Լոր գյուղի տեղը, ուր հին եկեղեցու ավերակների վրա, 1664 թ. կառուցված է այդ դարի լավագույն եկեղեցիներից մեկը։

Սիպտակ խաչի կամ Շլորուտի քարակույտերը և լանջի վրա մնացած քարերի հետքերը վկայում են, որ այստեղ ևս եղել է զետնափոր քարաշեն բնակավայրի տիպի մի ոչ փոքր ավան, որը բռնած է եղել տրդի լորի և Գետաթաղի միջև ընկած 1½կմ տարածությունը։

Այս դամբարանի և մի շարք այլ դամբարանների պեղումներից ստացված նյութերի և բաղմաթիվ հին բնակավայրերի ուսումնասիրության կապակցությամբ, հենց այստեղ, հարևանցիորեն, հարկադրված եմ կանգ առնել մի շատ կարևոր հարցի վրա, որը կենսական նշանակություն ունի հնագիտության, մասնավորապես բրոնզեդարյան, կամ վաղ երկաթի կուլտուրայով զբաղվող հնագետների համար։ Իսկն այն է, որ եթե մեզ այստեղ զբաղեցնող փոքրիկ դամբարանում չգտնվեր Շապուհ 3-րդի դրամը, ապա բոլոր հնագետները, միաբերան, այդ դամբարանը և նրա մեջ գտնված իրերը պետք է վերագրեին մեր էրայից առաջ, առնվազն 3—1-ին դարերին, այսինքն՝ 700—500 տարի ավելի վաղ պետք է դիտվեր, քան իր անվիճելի ժամանակը։ Իսկ եթե սրա կողքին, կամ մի այլ վայրի, նույն ժամանակի դամբարանում չգտնվեին ապակյա մասսայից ուլունքներ, կամ երկաթե հետք, այլ միայն սարդիոնե ուլունքներ և բրոնզե իրեր, որ շատ հնարավոր է, ապա մի քանի դարով պետք է ավելի վաղ համարվեին այդ իրերը։ Զարմանալի տեսակետ է քարացել հնագիտության մեջ ամենուրեք. ինչպիսի հին դամբարան էլ, որ գտնվում է պեղման ժամանակ, կամ պատահարար՝ շինարարության ժամանակ, և նրա մեջ բրոնզե իր՝ զենք ու զարդեր կամ զարդեր են հանդիպում, իսկույն, շատ հեշտությամբ, կնքվում է «բրոնզեդարյան» (վաղ կամ ուշ) էպոխա» ընդհանրացած անունով, կամ դրվում է «մեր թվականությունից առաջ վերջին հազարամյակի երկրորդ կամ առաջին կեսի» պիտակի տակ։ Հարց ե ծագում, չհաշված որոշակի հայտնի հնագիտական օրեկտները—հելլենիստական կամ ուշ ժամանակների քաղաքներն ու ավանները, մեր թվականությունից առաջ 5-րդ դարից մինչև մեր թվականության, ասենք, 5-րդ դարը, այսինքն շուրջ մի հազարամյակ, մի՞թե մեր երկրում մարդ չի մեռել, կամ այդ մեռելներին առանց որևէ իրի են թաղել։ Ինչու բոլոր գերեզմանները, դամբարանները մեր էրայից առաջ են, կամ բրոնզեդարյան են։ Արդյոք «բրոնզեդար» կամ «մեր թվ. առ. 1-ին հազարամյակ» վերնագրի տակ թանգարաններում ցուցադրված զենքերի ու իրերի մի զգալի մասը չի՞ պատկանել հայախոս, վրացախոս, ալբանախոս մարդկանց, կամ այդ զենքերով չեն կռվել պարսիկ ու հռոմեացի զավթիչների դեմ։ Այս մասին պետք է լուրջ մտածի սովետական առաջավոր հնագիտությունը և համարձակ կերպով վերանայի հին հնագիտության քարացած սկզբունքները, վերականգնի պատմական ճշմարտությունը։

М. Асратян

Лорский могильник

Резюме

В статье описывается погребальный инвентарь из раскопанной в 1950 г. маленькой могилы типа каменного ящика в могильнике, расположенном к северу от деревни Лор, Сисианского района, на правом берегу речки Ачена-гет.

Скелет 7—8-летней девочки лежал с севера (голова) на юг, со скорченными ногами. Между зубами покойницы находилась сильно патинизированная монета (из низкопробного серебра) сасанидского царя Шапура III (383—389).

Автор статьи данное погребение относит ко времени между 390—405 гг. на-

шей эры. Между тем христианство в Армении было признано государственной религией целым столетием раньше погребения.

Этот факт свидетельствует о том, что Лорский могильник относится к переходной эпохе от язычества к христианству и что официальной церкви и государству долгое время не удавалось искоренить язычество и вековые языческие обряды народа.

Исходя из этого факта, автор выдвигает вопрос о пересмотре существующей традиционной хронологии, в силу которой значительная часть погребального инвентаря из уже раскопанных многочисленных могильников последних веков до н. э. и первых пяти веков нашей эры огульно относилась к всепоглащающему „бронзовому веку" или эпохе культуры железа, т.е. не позже, как от первой половины I тысячелетия, ибо преобладающая часть этих предметов является изделием из бронзы или, частично, из железа .